

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՔՈԶԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ ՍՈՍԻ

ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

**Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական
աստիճանի հայցման համար**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2020

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանում:

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության դոկտոր
Սաֆարյան Արմեն Գեորգիի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Բոստանջյան Վարդան Բաբկենի

տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր
Վարդանյան Գոհար Վազգենի

Առաջադար կազմակերպություն՝

Հայ-ռուսական համալսարան


Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2020 թվականի մարտի 17-ին ժամը 14:00-ին, Հայաստանի ազգային ագրարային համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Տնտեսագիտության 002 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0009, Երևան, Տերյան փող., 74 շենք

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2020 թ. փետրվարի 5-ին:

002 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, դոցենտ՝



Ալեքսանյան Վ.Ս.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Տնտեսական աճը բարդ ու բազմաբովանդակ երևույթ է, տնտեսագիտության տեսության և յուրաքանչյուր երկրի տնտեսական քաղաքականության կարևորագույն թիրախներից մեկը: Տնտեսական աճը երկրի տնտեսության զարգացման ամփոփ բնութագրիչն է, որը պայմանավորված է ինչպես երկրի պետական տնտեսական քաղաքականությամբ և օրենսդրությամբ, այնպես էլ բազմաթիվ հոգեբանական ու սոցիալական գործոններով:

Ցանկացած տնտեսական համակարգում տնտեսական աճը հասարակական արդյունքի ընդլայնված վերարտադրության դրսևորման ձևն է և հասարակական արդյունքի քանակական մեծացումն ու որակական կատարելագործումը, որը հնարավորություն է տալիս ընդլայնել երկրի տնտեսության հնարավորությունները հասարակության պահանջմունքները լավագույնս բավարարելու համար:

Տնտեսական աճը քանակապես գնահատվում է ազգային տնտեսության վերջնական արդյունքի՝ իրական ՀՆԱ-ի շարժով: Տնտեսական աճի չափումը կամ գնահատումը կատարվում է երկու եղանակով.

ա) համախառն ներքին (ազգային) արդյունքի իրական ծավալի աճով որոշակի ժամանակահատվածում,

բ) համախառն ներքին (ազգային) արդյունքի իրական ծավալի աճով բնակչության մեկ շնչի հաշվով:

Իր հերթին իրական ՀՆԱ-ի աճի մասին խոսելիս ի թիվս այլ գործոնների որպես առաջնային խնդիր առաջ է գալիս ստվերային տնտեսության դեմ պայքարը և ստվերային եկամտի ու հետևաբար ստվերային բնույթի ծախսերի բացահայտումն ու պետական հաշվառման և պետական վիճակագրության դաշտում ներառումը:

Ստվերային տնտեսությանը հակազդելու գործոններից մեկը դրամաշրջանառությունն է, որի նորմատիվ-իրավական կարգավորումը և ինստիտուցիոնալ բարելավումը հիմք է հանդիսանում ողջ տնտեսության արդյունավետ կազմակերպման և դրա բացասական բաղադրիչի՝ ստվերային հատվածի սահմանափակման համար:

Կանխիկ դրամի շարժը, ըստ իր բնույթի, գործնականում անտեսանելի գործընթաց է, քանի որ կանխիկը կարող է փոխանցվել մի անձից մյուսին, առանց ձևակերպումների և գործարքների ֆիքսման: Հենց այս հանգամանքը ստվերային տնտեսության գործունեության հիմնական պայմանն է:

Շուկայական տնտեսության անցման հետ կապված բարեփոխումների ժամանակահատվածում ՀՀ-ում հենց կանխիկ դրամաշրջանառությունն էր, որ ստացավ լայն տարածում, ինչին նպաստել էին մի շարք գործոններ (պատմական, քաղաքական և տնտեսական): Առևտրային գործունեության շրջանակում կանխիկ դրամական միջոցների ակտիվ օգտագործման արդյունքում ձևավորվել է հսկայական և դժվար կառավարելի դրամական զանգված, որն իր հերթին ստվերային տնտեսության տարբեր սխեմաները ֆինանսավորելու աղբյուրն է և հիմնական հաշվարկավճարային գործիքը:

Այսպիսով, ՀՀ տնտեսությունում դրամաշրջանառության բարելավման խնդիրը կանխիկ դրամաշրջանառության կրճատման և անկանխիկի իրականացման ինստիտուտների ու մեխանիզմների զարգացման ուղղությամբ արդիական է և ունի կարևոր՝ գիտագործնական նշանակություն, որով էլ պայմանավորված է հետազոտության արդիականությունը, հրատապությունն ու անհրաժեշտությունը:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Ատենախոսության ուսումնասիրության օբյեկտը ՀՀ տնտեսությունն է և գործող դրամաշրջանառության համակարգը, իսկ առարկան՝ դրամաշրջանառության կարգավորումը ստվերային տնտեսության կրճատման համատեքստում:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է Հայաստանում սովերային տնտեսության ծավալների կրճատման ուղենիշերի բացահայտումը՝ դրամաշրջանառության կառուցվածքի օպտիմալացման համար անհրաժեշտ նախապայմանների ձևավորման շնորհիվ: Վերջինս ունի ինչպես տեսական, գիտական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն:

Նշված նպատակին համահունչ առաջադրվել են ուսումնասիրության հետևյալ հիմնական խնդիրները՝

- ուսումնասիրել արդի դրամաշրջանառության վերաբերյալ փորձագիտական հիմնական տեսակետներն ու մոտեցումները,
- ուսումնասիրել դրամաշրջանառության դերը տնտեսության իրական հատվածի կարգավորման հարցում,
- վերլուծել ՀՀ դրամաշրջանառության կարգավորման օրենսդրական դաշտը,
- սահմանել դրամաշրջանառության զարգացման գործոնների և կանխիկ դրամաշրջանառության մեջ սովերային գործընթացներին հակազդելու պայմանները,
- անկանխիկ դրամաշրջանառության համակարգի կատարելագործման միջոցով ներկայացնել կանխիկ դրամաշրջանառության նվազեցման և սովերային տնտեսության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման գործնական ուղիները:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթը: Հետազոտության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթը հետևյալներն են.

▪ հանրապետությունում իրականացվող դրամավարկային քաղաքականության տարբեր ուղղությունների ուսումնասիրության հիման վրա գնահատվել է դրամաշրջանառության կարգավորման արդյունավետությունը ու դրա բարձրացման առանցքային խոչընդոտները,

▪ տնտեսապես հիմնավորվել է տնտեսավարող սուբյեկտների կողմից կանխիկ դրամով գործառնությունների կանոնակարգման բարելավման անհրաժեշտությունը, մշակվել է պետական վերահսկողական նոր կառուցակարգ,

▪ ուսումնասիրվել են տնտեսավարող սուբյեկտների կողմից աշխատողի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չձևակերպելու պարագայում չգրանցված աշխատողների աշխատանքի կանխիկ վարձատրության դեպքերը և առաջարկվել է յուրաքանչյուր չձևակերպված վարձու աշխատողի համար պատժաչափը խստացնել՝ սահմանելով միջին ամսական աշխատավարձից հաշվարկվող եկամտային հարկի գումարի նկատմամբ,

▪ մինչև 3 միլիոն ՀՀ դրամ գործարքների պարագայում կանխիկի օգտագործումը ընդունելի համարելով՝ հիմնավորվել և առաջարկվել է օրենսդրորեն խստացնել տնտեսավարող սուբյեկտների՝ հսկիչ դրամարկղային մեքենայի բացակայության կամ հարկային մարմնում գրանցված չլինելու համար պատժամիջոցը,

▪ ֆիզիկական անձանց միջև կանխիկ դրամով գործարքների կանոնակարգման առումով տնտեսապես հիմնավորվել և առաջարկվել է օրենսդրական նոր սահմանափակում:

Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը: Հետազոտության տեսական հիմք են հայրենական և օտարերկրյա տնտեսագետների աշխատությունները, ՀՀ կանխիկ և անկանխիկ դրամաշրջանառության օրենսդրական ոլորտի ձևավորման իրավական ակտերը: Վերլուծության առումով հետազոտության տեղեկատվական հիմք են ծառայել ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ ազգային վիճակագրական կոմիտեի տվյալները:

Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են այնպիսի տնտեսագիտական մեթոդներ, ինչպիսիք են տնտեսավիճակագրական, համեմատական, գրաֆիկական, համադրման, ինդուկցիայի և դեդուկցիայի մեթոդները:

Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը: Հետազոտության հիմնական արդյունքները կարող են օգտագործվել Հայաստանի Հանրապետության դրամա-շրջանառության համակարգի զարգացման և կատարելագործման գործընթացում: Մասնավորապես, դրանք կարող են կիրառվել ՀՀ Ֆինանսների նախարարության, ՀՀ Կենտրոնական Բանկի, ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի, ինչպես նաև ՀՀ Ազգային Ժողովի Ֆինանսաբյուջետային, Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովների կողմից:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսությունը քննարկվել և հավանության է արժանացել Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ֆինանսահաշվային, Ագրարային էկոնոմիկայի և Ագրոբիզնեսի կառավարման ամբիոնների համատեղ նիստում, իսկ հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված թվով 6 գիտական հրապարակումներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը շարադրված է 155 էջի վրա, բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և ներառում է 11 աղյուսակ ու 5 գծապատկեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդյունավետությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը, խնդիրները, առարկան և օբյեկտը, ատենախոսության տեղեկատվական և մեթոդական հիմքերը, ձևակերպվել է ատենախոսության գիտական նորույթը, գործնական նշանակությունը և կիրառման հնարավորությունները:

Առաջին՝ «Դրամաշրջանառության կարգավորման տեսամեթոդական հիմքերը» գլուխը նվիրված է դրամաշրջանառության տնտեսագիտական բովանդակությանը, մասնավորապես, նպատակ ունենալով բացահայտելու դրամաշրջանառության դերը տնտեսության իրական հատվածի կարգավորման հարցում և վերլուծելու դրամաշրջանառության կարգավորման օրենսդրական հիմքերը: Փողի առաջացումը դիտարկելով, որպես ոչ թե պատահական, այլ օրինաչափ երևույթ՝ պայմանավորված մարդկային պատմության զարգացման օբյեկտիվ ընթացքով, կարևորվել է համընդհանուր համարժեքների ընտրությունը՝ պայմանավորված նաև ազգային առանձնահատկություններով և բնակլիմայական պայմաններով: Մյուս կողմից, հատկանշական է, որ որպես պատմական և տնտեսագիտական կատեգորիա¹, փողը հասարակության զարգացման արդյունք է, քանզի առաջացել է ապրանքափոխանակության ժամանակ և հանդես է գալիս որպես փոխանակության ածանցյալ: Որպես կանոն, փողի դերը նույնացվում է փոխանակության միջնորդի հետ, ինչը պահանջում է դիտարկել վերջինս որպես հատուկ ձևի ապրանք են, փոխանակության միջնորդ, արժեքի չափի միավոր, ինչպես նաև որպես վճարման, ապրանքների և ծառայությունների արժեքի չափման, կուտակման միջոց և համաշխարհային փող:

Դրամաշրջանառությունը դիտարկվում է որպես դրամանիշերի անընդհատ շարժի մի գործընթաց, որը պայմանավորված է աշխատանքների և ծառայությունների մատուցման դիմաց վճարման, ապրանքների գնման, տարբեր տեսակի վճարումների և հաշվարկների իրականացման, թոշակների տրամադրման, պարտքերի վերադարձման գործընթացներով՝ կանխիկ և անկանխիկ ձևերով: Այն համարվում է երկրի վճարային շրջանառության

¹ Владимирова М.П., Козлов А.И. Деньги, кредит, банки: учебное пособие – 2-е изд., стер. – М.: КНОРУЦ, 2006. стр. 9

անբաժան մասը, ընդ որում՝ շրջանառության մեջ գտնվելիս փողը կատարում է վճարման միջոցի, շրջանառության միջոցի և կուտակման միջոցի գործառույթները²:

Երկրի դրամաշրջանառությունը ներկայացնելիս կարևոր է առանձնացնել.

1. Կանխիկ դրամաշրջանառություն, այն է՝ դրամի շրջանառության մի մասը, որը վերաբերում է կանխիկ փողի շարժին, որտեղ փողը կատարում է շրջանառության միջոցի և վճարման միջոցի գործառույթները³,

2. Վճարային շրջանառություն, այն է՝ փողի շարժը, որի ընթացքում այն կատարում է վճարման միջոցի գործառույթ (նեղ իմաստով), կամ փողի և փողի շուկայի մյուս գործիքների շարժը, որի ընթացքում դրանք կատարում են վճարման միջոցի գործառույթ⁴:

Ինչ վերաբերվում է տնտեսության իրական հատվածի կարգավորման հարցում դրամաշրջանառության դերին, ապա կարևոր է որոշել կոնկրետ իրավիճակին համապատասխան շրջանառության համար անհրաժեշտ փողի զանգվածը, նրա կազմը և կառուցվածքը, որը ծառայում է արտադրության ծավալի աճի ապահովմանը, բնակչության կարիքների բավարարմանը, ինֆլյացիայի ծրագրային մակարդակի պահպանմանը⁵:

Աշխատանքում ուսումնասիրվել է շրջանառության մեջ եղած փողի զանգվածը, փողի նկատմամբ տնտեսությունում առկա պահանջարկի գնահատման հիմնական մոտեցումները, դրա վրա ազդող հիմնական գործոնները, դրամական շուկայի ընդհանուր հաշվեկշռվածությունը, գների կայունությունը, տնտեսությունում համախառն պահանջարկի կտրուկ տատանումները, կառավարվող դրամական առաջարկի ազդեցությունը տոկոսադրույքների, համախառն թողարկման և գների մակարդակի վրա: Հաշվի առնելով պետության տնտեսական քաղաքականության մշակման գործընթացում փողի նկատմամբ պահանջարկի գնահատման կարևորությունը, այն դիտարկվել է ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող և անցումային տնտեսություն ունեցող երկրներում⁶:

Մեր դիտարկմամբ, համոզիչ են Քեմբրիջի դպրոցի դասական տնտեսագետներ Ալֆրեդ Մարշալի և Արթուր Պիգուի տեսակետները, որոնք չեն բացառում, որ տոկոսադրույքը կարող է ազդել փողի պահանջարկի վրա, քանի որ փողը իրականացնում է ոչ միայն շրջանառության միջոցի, այլև հարստության կուտակման միջոցի ֆունկցիա:

Ֆինանսական վիճակագրության տեսանկյունից տնտեսությունում շրջանառվող «փողը» գործնականում քանակապես գնահատելիս անհրաժեշտ ենք համարում սահմանել փողի ագրեգատների հետևյալ երեք բնութագրերը.

- ֆինանսական գործիքների տեսակները, որոնք պետք է ընդգրկվեն «փողի» սահմանման մեջ կամ փողի ագրեգատների կազմում,

- տնտեսությունում շրջանառվող «փողը» թողարկող ինստիտուտների կամ կազմակերպությունների տեսակները (տնտեսության՝ փող թողարկող հատվածները),

- տնտեսության «փողը» տնօրինող կամ պահող հատվածները:

Ինչ վերաբերվում է փողի ագրեգատների որոշմանը, ապա դրա համար կարևորվում է այն հանգամանքը, թե ովքեր են տնտեսության «փող թողարկողները»: Գործնականում դրանք բոլոր այն ֆինանսական կազմակերպություններն են, որոնց պարտավորություններն իրենցից ներկայացնում են «փող» հանդիսացող ֆինանսական գործիքներ: Տարբեր երկրների փողի ագրեգատների կազմն ու կառուցվածքը զգալիորեն տարբերվում են, ինչը

² Деньги. Кредит. Банки: Учебник для вузов Под ред. академ. РАЕН Е.Ф. Жукова. — 2-е изд., перераб. и доп. — М.: ЮНИТИ-ДАНА, 2003. - 30с.

³ Деньги, кредит, банки. Экспресс-курс: учебное пособие / кол. авт.; под ред. проф. О.И. Лаврушина. — 4-е изд., стер. — М.: КНОРУС, 2010 — с. 71

⁴ Նույն տեղում — с. 72

⁵ Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ /Դասագիրք/ Բաղանյան Լ., Արզարյան Կ., Չատինյան Գ., Մաթևոսյան Ա. և ուրիշներ — Եր., 2010, էջ 501

⁶ Stephen M. Goldfeld, Daniel E. Sichel “The Demand for Money”, in Handbook of Monetary Economics, Volume I, Edited by B.M. Friedman and F. H. Hahn, Elsevier Science Publishers B. V., էջ 300:

պայմանավորված է երկրների տնտեսությունների, դրանց ֆինանսական համակարգերի տարբերություններով և առանձնահատկություններով: Հայաստանում, մասնավորապես, փողի ագրեգատներն ընտրելիս կարևոր է հաշվի առնել և՛ դրամավարկային վիճակագրության առկա միջազգային ստանդարտները, և՛ մեր երկրի տնտեսական իրավիճակն ու ֆինանսական շուկայի զարգացածության աստիճանն ու առանձնահատկությունները: Հատկանշական է, որ տնտեսության փողի ցուցանիշները կարող են փոփոխվել՝ ելնելով կիրառվող ֆինանսական գործիքների զանազանությունից, շուկաների հետագա զարգացումից, ուստի անհրաժեշտ է փոխել նաև փողի ցուցանիշների ազգային սահմանումները՝ համապատասխան փողի ագրեգատներ ստանալու համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեր երկրում արտարժույթը օգտագործվում է որպես վճարման միջոց, համաձայն ենք այն դիտարկման հետ, որ անհրաժեշտ է հաշվարկել նաև կանխիկ փոխարինման գործակիցը, որն ըստ էության շրջանառվող կանխիկ արտարժույթի տեսակարար կշիռն է ընդհանուր կանխիկում: Այս գործակիցը հաշվարկելու համար անհրաժեշտ է գնահատել շրջանառությունում կանխիկ արտարժույթը: Կանխիկ արտարժույթի գնահատումը թույլ կտա հաշվարկել արդյունավետ փողի զանգվածը (ԱՓԶ), որը.

$$\text{ԱՓԶ} = \text{ՓԶ} + \text{ՇԿԱ} \quad (1.2.5)$$

$$\text{ԱՆՓԶ} = \text{ՆՓԶ} + \text{ՇԿԱ}, \quad (1.2.6), \text{ որտեղ՝}$$

ՓԶ - ն՝ փողի զանգվածն է,

ՇԿԱ - ն՝ շրջանառությունում կանխիկ արտարժույթը,

ԱՓԶ - ն՝ արդյունավետ փողի զանգվածը,

ՆՓԶ - ն՝ նեղ փողի զանգվածը,

ԱՆՓԶ - ն՝ արդյունավետ նեղ փողի զանգվածը:

Ատենախոսությունում բերված աղյուսակների ցուցանիշներով և դրանց վերլուծության արդյունքում գծանկարների օգնությամբ դիտարկվել են տնտեսության իրական հատվածի վրա կանխիկ և անկանխիկ դրամաշրջանառության ազդեցությունները, որոնք բացահայտում են ստվերային տնտեսության ծավալների կրճատման հնարավորությունները և տնտեսության տարբեր հատվածների, մասնավորապես, առևտրի և ծառայությունների ոլորտում կանխիկ դրամի ցուցանիշի փոխկապվածությունը:

Ելակետային տվյալների և կատարված հաշվարկների հիման հիման վրա պարզվել է, որ ցուցանիշների միջև կապը 2014-2018 թթ. դրական է և խիստ ուժեղ, ինչն էլ նշանակում է, որ ՀՀ ՀՆԱ ցուցանիշը խիստ կախվածության մեջ է գտնվում շրջանառությունում կանխիկ դրամի ցուցանիշից:

Աղյուսակ 1⁷

Տնտեսության իրական հատվածի և դրամաշրջանառության հիմնական ցուցանիշները՝ ըստ 2014-2018 թթ.⁸


Անվանումները	Զ/մ	2014 թ.	2015 թ.	2016 թ.	2017 թ.	2018 թ.
Փողի բազա	մլրդ. ՀՀ դրամ	886.8	921.3	1042.3	1032.0	1215.6
Փողի զանգված	մլրդ. ՀՀ դրամ	1674.1	1855.7	2180.1	2582.8	2775.1
Անվանական ՀՆԱ	մլրդ. ՀՀ դրամ	4828.6	5032.1	5067.3	5568.9	6002.7
Փողի բազա / ՀՆԱ	%	18.37	18.31	20.6	18.5	20.3
Փողի զանգված/ՀՆԱ	%	34.67	36.88	43.0	46.4	46.2

⁷ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից:


⁸ Աղբյուրները՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2018 թ., 2017 թ., ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ և ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ, 20 փետ. 2019թ., armstat.am և ՀՀ ԿԲ կայք-էջ <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

Սակայն այս առումով հետաքրքրական է այն հանգամանքը, որ կանխիկի աճն, ըստ էության, չի հանգեցնում ՀՆԱ-ի համապատասխան աճի, ինչն էլ վկայում է և ևս մեկ անգամ ամրապնդում այն դիրքորոշումը, որ կանխիկի մի զգալի զանգված սպասարկում է ստվերային տնտեսությանը:

Աշխատանքում հիմնավորվում է այն տեսակետը, որ շրջանառության կանխիկի 1 միավորով ավելացումը բերում է ՀՆԱ-ի ծավալային աճի 7.8452 միավորի չափով, ինչպես նաև՝ բերված ցուցանիշների միջև կապն ուղիղ համեմատական է և բավական սերտ, քանի որ կորելյացիայի գործակցի մեծությունը 0.9208 է: Սա նշանակում է, որ իրական հատվածը բնորոշող ցուցանիշը կախվածության մեջ է շրջանառությունում կանխիկ դրամի ցուցանիշից:



Գծապատկեր 1 Տնտեսության իրական հատվածի և շրջանառությունում կանխիկ դրամի ցուցանիշի փոխկապվածությունը⁹



Գծապատկեր 2 Առևտրի և ծառայությունների ոլորտների շրջանառության և շրջանառությունում գտնվող կանխիկի հարաբերակցությունը¹⁰

Աղյուսակ 2¹¹

Առևտրի և ծառայությունների ոլորտների ու շրջանառությունում կանխիկ դրամի ցուցանիշի փոխկապվածությունն ըստ 2014-2018 թթ. տվյալների


Անվանումները	Չ/մ	2014 թ.	2015 թ.	2016 թ.	2017 թ.	2018 թ.
Շրջանառությունում կանխիկ դրամ	մլրդ. դրամ	348.4	345.5	390.9	445.2	477.0
Առևտուր և ծառայություններ	մլրդ. դրամ	3503.2	3431.7	3514.0	4075.2	4969.3
Կանխիկ / Առևտուր և ծառայություններ	%	9.9	10.1	11.1	10.9	9.6

⁹ Գծապատկերը կազմված է հեղինակի կողմից:

¹⁰ Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական տարեգիրք, 2018, 2015, ՀՀ ԿԲ հրապարակումներ՝ www.cba.am

¹¹ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից:

Ավելին՝ մասնավորապես առևտրի և ծառայությունների ոլորտներում կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ բերված ցուցանիշների և շրջանառությունում կանխիկ միջև կապն ուղիղ համեմատական է և բավական սերտ, քանի որ կորելյացիայի գործակցի մեծությունը 0.8403 է, և կանխիկի 1 միավորով ավելացումը բերում է առևտրի և ծառայությունների ոլորտների գումարային ցուցանիշի ծավալային աճի 10.219 միավորի չափով: Այս 2 ցուցանիշների միջև վիճակագրական կապն արտահայտված է կորելյացիոն-ռեգրեսիոն վերլուծության օգնությամբ¹²:



Գծապատկեր 3 Առևտրի և ծառայությունների ոլորտների ու շրջանառությունում կանխիկ դրամի ցուցանիշի փոխկապվածությունը

Ապրանքային արտադրության և շուկայական տնտեսության պայմաններում բոլոր տիպի ձեռնարկությունների ու կազմակերպությունների, նրանց ու բնակչության միջև փողային հարաբերություններն ունեն դրամական հաշվարկի բնույթ՝ հիմնված շրջանառության միջոցի վճարամիջոցի ֆունկցիաների վրա¹³:

Աշխատանքի վերոնշյալ բաժնում վերլուծության են ենթարկվել նաև ՀՀ և դրամաշրջանառության կարգավորման և դրա բարելավման օրենսդրական հիմքերը:

Ատենախոսության երկրորդ՝ «**Կանխիկ և անկանխիկ դրամաշրջանառության կարգավորման միտումները**» գլխում անդրադարձ է կատարված կանխիկ և անկանխիկ դրամաշրջանառության փոխառնչություններին և առկա միտումներին: Հայաստանի դրամաշրջանառության և դրամական հարաբերությունների էվոլյուցիայի պատմական տարբեր փուլերի ուսումնասիրությամբ ներկայացվում է ՀՀ դրամավարկային հիմնական ցուցանիշների և դրամական հիմնական ցուցանիշների դինամիկան, դրանց բացարձակ և հարաբերական շեղումները, որոնք ներկայացված են ստորև բերված աղյուսակներում:

Աղյուսակ 3

ՀՀ դրամավարկային ցուցանիշները՝ 2014-2018 թթ.¹⁴ (մլրդ. ՀՀ դրամ)

Ցուցանիշները	2014 թ.	2015 թ.	2016 թ.	2017 թ.	2018 թ.
Փողի բազա	886.8	921.3	1042.3	1032.0	1215.6
Շրջանառությունում կանխիկ դրամ	348.4	345.5	390.9	445.2	477.0
Ցպահանջ ավանդներ դրամով	182.9	210.1	264.8	343.6	418.3
Դրամային նեղ զանգված (M1)	531.2	555.6	655.7	788.8	895.3
Ժամկետային ավանդներ դրամով	287	304.9	418.0	595.0	671.6
Դրամային լայն զանգված (M2)	818.3	860.5	1073.3	1383.9	1566.8
Արտադրության ավանդներ	855.9	995.2	1106.4	1198.9	1208.3
Փողի զանգված (M2X)	1674.2	1855.7	2180.1	2582.8	2775.1

¹² Հաշվարկները կատարված են հեղինակի կողմից:

¹³ Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ, Բաղանյան Լ., Աբգարյան և ուրիշներ, Եր., 2010, էջ 520

¹⁴ Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ վիճակագրական տեղեկագիր, 2015 թ., 2014 թ., 2013 թ., 2012 թ., 2011 թ.

ՀՀ դրամավարկային հիմնական ցուցանիշների բացարձակ և հարաբերական շեղումներն
2014-2018 թթ. ընթացքում¹⁵

Ցուցանիշները	2015 թ. շեղումը 2014 թ. նկատմամբ		2016 թ. շեղումը 2015 թ. նկատմամբ		2017 թ. շեղումը 2016 թ. նկատմամբ		2018 թ. շեղումը 2017 թ. նկատմամբ	
	բացարձակ (մլրդ. դրամ)	հարաբերա կան (%)	բացարձակ (մլրդ. դրամ)	հարաբերա կան (%)	բացարձակ (մլրդ. դրամ)	հարաբերա կան (%)	բացարձակ (մլրդ. դրամ)	հարաբերա կան (%)
Փողի բազա	34.5	3.9	121.0	13.1	-10.3	-1.0	183.6	17.8
Շրջանառությունում կանխիկ դրամ	-2.9	-0.8	45.4	13.1	54.3	13.9	31.8	7.1
Ցայահանջ ավանդներ դրամով	27.2	14.9	54.7	26.0	78.8	29.8	74.7	21.7
Դրամային նեղ զանգված (M1)	24.4	4.6	100.1	18.0	133.1	20.3	106.5	13.5
Ժամկետային ավանդներ դրամով	17.9	6.2	113.1	37.1	177	42.3	76.6	12.9
Դրամային լայն զանգված (M2)	42.2	5.2	212.8	24.7	310.6	28.9	182.9	13.2
Արտարժույթային ավանդներ	139.3	16.3	111.2	11.2	92.5	8.4	9.4	0.8
Փողի զանգված (M2X)	181.5	10.8	324.4	17.5	402.7	18.5	192.3	7.4

Վերլուծության են ենթարկվել նաև շրջանառության մեջ գտնվող վճարային քարտերի քանակը և դրանցով կատարված գործառնությունների քանակը և ծավալը, որը վկայում է, որ վճարային քարտերի քանակը, ունենալով տատանողական միտում, արձանագրել է աճ, իսկ դրանց ընդհանուր քանակը 2018 թ.՝ 2014 թ. նկատմամբ աճել է ավելի քան 400 հազարով կամ շուրջ 25 %-ով: ԱՐՔԱ քարտի նկատմամբ բնակչության հետաքրքրությունն աճել է 2014-2015 թթ. և 2017-2018թթ., այսինքն՝ ավելի շատ գործարքներ են կատարել քարտերով, սակայն դեռ ամեն գործարքի ծավալը փոքր է՝ մեծ գումարների գործարքները դեռևս կանխիկ են:

Որպես ներկայացվածի արտացոլում վճարային համակարգի կառուցման, վերահսկման և կատարելագործման աշխատանքները վկայում են, որ այն մեծ ներուժ ունի բավարարելու իր առջև դրված պահանջները: Այս ամենը հիմք է տալիս բացահայտել դրամաշրջանառության համակարգային հիմնախնդիրները:

Դրամական զանգվածի միտումների համատեքստում, հաշվի առնելով, որ ՀՀ ՀՆԱ-ի ավելի քան 90%-ն ուղղվում է սպառման ծախսերին, վերլուծվել են տնային տնտեսությունների և պետական հատվածի սպառման ծախսերի կազմն ու դինամիկ փոփոխությունները:

Աղյուսակ 5-ում բերված տվյալներից ակնառու է ուսումնասիրվող 5 տարիների ընթացքում վերջնական սպառմանն ուղղված ծախսերի աճի միտումը՝ 734.3 միլիարդ դրամ կամ 15.6%: Փողի զանգվածի ավելի քան 60%-անոց աճի պարագայում (իսկ կանխիկի պարագայում 128.6 միլիարդ դրամ կամ 36.9%), վերջնական սպառման ծախսերն արձանագրել են աճ ընդամենը 15.6%-ի չափով, ինչից կարելի է եզրակացնել, որ կանխիկի առյուծի բաժինը սպասարկում է ստվերային տնտեսությանը, ինչն ավելի քան մտահոգիչ է:

¹⁵ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից:

Տնային տնտեսությունների և պետական հատվածի սպառման ծախսերի կազմն ու դինամիկ փոփոխություններն՝ ըստ 2014-2018 թթ. տվյալների, միլիարդ ՀՀ դրամ¹⁶

Ցուցանիշները	2014 թ.	2015 թ.	2016 թ.	2017 թ.	2018 թ.
Վերջնական սպառման ծախսեր, այդ թվում՝	4714.3	4599.4	4598.6	5113.0	5448.6
տնային տնտեսությունների	4110.2	3915.9	3892.7	4288.7	4638.7
պետական հիմնարկների	583.6	661.3	681.8	792.2	772.0

Առաջնային կարևորության հարց է նաև մրցունակ իրական հատվածի զարգացումը և տնտեսական ակտիվության խրախուսումը: Այս առնչությամբ աշխատանքում ուսումնասիրվել է ևս մեկ կարևորագույն ցուցանիշի՝ ստվերային տնտեսության և դրա գնահատման գաղափարը:

Վերլուծությունները ցույց են տալիս, որ միջազգային ֆինանսական և վարկային հաստատությունների փորձագետները գնահատում են տարբեր երկրներում ստվերային տնտեսության մակարդակը, հիմնված այն կարծիքի վրա, որ ստվերային տնտեսության չափի և շրջանառության մեջ գտնվող կանխիկ դրամի զանգվածի միջև կա ուղիղ համեմատական կապ: Միևնույն ժամանակ, կանխիկ դրամաշրջանառության սահմանափակումից և, համապատասխանաբար, անկանխիկ վճարումների և հաշվարկների տեսակարար կշռի ավելացումից սովորաբար եզրակացվում է, որ ստվերային տնտեսության մասնաբաժինը նվազում է, և գործարարների ու հասարակության միջև հարաբերությունների թափանցիկությունը մեծանում է: Այս առումով հարցն ակնհայտորեն բխում է դրամաշրջանառության օպտիմալ կառուցվածքի, այն է՝ կանխիկ և անկանխիկ մասերի օպտիմալ հարաբերակցության սահմանմանը:

Ատենախոսության նշյալ բաժնում ուսումնասիրվել է նաև դրամաշրջանառության արդյունավետ կարգավորման միջազգային փորձը՝ ինչպես զարգացած, այնպես էլ համադրելի վիճակում գտնվող զարգացող երկրների օրինակներով, որը կարող է թույլ տալ ներդնել ազգային տնտեսությունում լավագույն կազմակերպա-կառավարչական և գիտատեխնիկական որոշումներ:

Միջազգային փորձի տեսանկյունից կան կանխիկի սահմանափակման ինչպես դրական, այնպես էլ բացասական օրինակներ: Այսպես, որպես անհաջող փորձ նշվում է Հնդկաստանը, որը գնաց խոշոր անվանական արժեքով դրամանիշերի օգտագործման արգելման ճանապարհով, ինչը խաթարեց ազգային ֆինանսական համակարգի նկատմամբ վստահությունը, վատթարացրեց ներդրումային միջավայրը և դեռևս դրական փոփոխություններ նկատելի չեն ստվերի նվազեցման ուղղությամբ:

Մինչդեռ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրները, առաջին հերթին Լեհաստանը, դրական օրինակ են հանդիսանում: Ըստ Ernst & Young-ի փորձագետների, այս երկրում ստվերային տնտեսության մակարդակը 2004թ. ՀՆԱ-ի 19%-ից իջել է 2014թ. ՀՆԱ-ի 12.4%-ին: Ստվերային տնտեսության դեմ պայքարի առավել արդյունավետ միջոցներից են վճարային համակարգերի և անկանխիկ վճարումների ֆինանսական ենթակառուցվածքի զարգացումը, աշխատավարձերի և կենսաթոշակների վճարումը անկանխիկ եղանակով:

Վարչական մեթոդով կանխիկի սահմանափակման թերևս լավագույն օրինակներից Արևելյան Եվրոպայում կարող է լինել Բելառուսի օրինակը, որտեղ ոլորտի կանոնակարգվածության մակարդակը բավականին բարձր է: Սահմանված է կանխիկով վճարումների

¹⁶ Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական տարեգիրք 2018, էջ 255 և ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ և ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ, 20.02.2019թ., armstat.am

իրականացման առավելագույն սահմանաչափը՝ 1000 բազային միավոր, ապրանքի վաճառքի, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման համար իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը իրավունք չունեն վճարումներ կատարել կանխիկով: Բեյառուսում իրավաբանական անձանց, նրանց առանձին ստորաբաժանումների և անհատ ձեռնարկատերերի միջև կանխիկ դրամով գործարքները մեկ օրվա ընթացքում չեն կարող գերազանցել բազային ցուցանիշի 100-ապատիկը, բացառությամբ վերոհիշյալ կարգով սահմանված դեպքերի¹⁷: Համաձայն կարգի՝ իրավաբանական անձինք, ստորաբաժանումները, բանկային հաշիվներ բացող անհատ ձեռնարկատերերը իրավունք ունեն ինքնուրույն որոշում կայացնել բանկին դրամական փոխանցման կարգի և ժամկետների վերաբերյալ¹⁸: Եկամտի փոխանցման պայմանները կարող են սահմանվել օրական, ամեն օր կամ մեկ ամիսը մեկ անգամ, և այլն: Սակայն այստեղ կա ևս մեկ կարևոր պահ. իրավաբանական անձինք, դրանց ստորաբաժանումները, անհատ ձեռնարկատերերը, բանկային հաշիվներ բացող գործարքառուները, որոնք ունեն իրենց դրամարկղերում ամենօրյա կամ պարբերական դրամական մուտքեր և սպասարկող բանկից կանխիկ գումար են ստանում, պարտավոր են կանխիկ գումարը հանձնել իրենց սպասարկող բանկ կամ բանկից ստացած կանխիկ գումարն ուղղել համապատասխան գործառնությանը՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում (գյուղատնտեսական կազմակերպությունների համար՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում), ներառյալ կանխիկի ստացման օրը¹⁹:

Այս ամենը թույլ է տալիս անդրադառնալ դրամաշրջանառության կարգավորման հնարավոր ուղղություններին, որոնք ուղղակի առնչություն ունեն հանրապետությունում տնտեսական կայուն աճ ապահովելու հիմնահարցերին:

Ատենախոսության երրորդ՝ «**Դրամաշրջանառության կարգավորման բարելավման և տնտեսական աճի ապահովման հնարավորությունները ՀՀ-ում**» գլխում վերլուծվել են դրամաշրջանառության արդյունավետության պետական քաղաքականությունը և առանցքային խոչընդոտները, մատնանշել Հայաստանում դրամաշրջանառության կարգավորման թիրախերը տնտեսական աճի ապահովման համատեքստում, որոնց արդյունքում հիմնավորվել են դրամաշրջանառության արդյունավետության բարձրացման ինստիտուցիոնալ հեռանկարները ՀՀ-ում: Մասնավորապես, նշվում է, որ կանխիկ դրամաշրջանառության ոլորտում իրականացվող պետական բարեփոխումները պետք է միտված լինեն ձևավորելու այնպիսի համակարգ, որն առավելագույնս հնարավորություն կտա տնտեսության մեջ կանխիկ դրամի նկատմամբ ձևավորված պահանջարկը բավարարել՝

- նախընտրելի ժամկետներում,
 - ըստ անհրաժեշտ ծավալների և կառուցվածքի,
 - ըստ պատշաճ որակի (առանց կեղծ, հնամաշ դրամանիշերի):
- Այդպիսի համակարգը պետք է ապահովի կանխիկ դրամաշրջանառության՝
- ադեկվատությունը (պահանջարկն ըստ անհրաժեշտ ծավալների, կառուցվածքի և որակի բավարարում),
 - անընդհատությունը (անընդհատ գործունեություն ապահովելու հնարավորություն),
 - օպերատիվությունը (ճիշտ ժամանակին արձագանքելու հնարավորություն),
 - անվտանգությունը (մարդկանց, արժեքների և սարքավորումների անվտանգության ապահովում),

¹⁷ Բեյառուսի Ազգային բանկի պաշտոնական կայք-էջ. <http://www.nbrb.by/today/faq/cashoperations.asp>

¹⁸ «Բեյառուսի Հանրապետության տարածքում դրամարկղային գործառնությունների և բեյառուսական ռուբլով կանխիկ գործարքների իրականացման կարգի» 10 կետ. http://www.nbrb.by/legislation/documents/pp_107_235.pdf

¹⁹ «Բեյառուսի Հանրապետության տարածքում դրամարկղային գործառնությունների և բեյառուսական ռուբլով կանխիկ գործարքների իրականացման կարգի» 16 կետ. http://www.nbrb.by/legislation/documents/pp_107_235.pdf

- վերլուծելիությունը (տվյալների հավաքագրման, վերլուծության և կանխատեսման, ինչպես նաև հիմնախնդիրների բացահայտման և լուծումների առաջադրման մշտական հնարավորություն):

Մեր գնահատմամբ ՀՀ-ում կանխիկ դրամաշրջանառության համակարգի մասնակիցների տեխնիկական զինվածությունը ներկայումս գտնվում է շատ ցածր մակարդակի վրա: Բավական ցածր է նաև կանխիկով գործառնությունների ավտոմատացման և էլեկտրոնայնացման մակարդակը: Կանխիկ դրամի վերամշակման համար բավարար տեխնիկական հագեցվածություն ունի միայն ՀՀ կենտրոնական բանկը: ՀՀ կենտրոնական բանկում կանխիկ դրամի վերահաշվարկը, տեսակավորումը և մասամբ նաև ոչնչացումն իրականացվում է ավտոմատ եղանակով: Իսկ ՀՀ կենտրոնական բանկի տարածքային դրամարկղային կենտրոններում և առևտրային բանկերում ավտոմատ իրականացվում է միայն կանխիկ դրամի վերահաշվարկը: Թույլ տեխնիկական հագեցվածություն ունեն նաև ինկասացիոն կազմակերպությունները: Կանխիկ դրամի փոխադրումների համար նրանց կողմից օգտագործվող փոխադրամիջոցներից միայն մի մասն է մասնագիտացված ինկասացիոն փոխադրամիջոց, մյուս դեպքերում օգտագործվում են հիմնականում քաղաքացիական փոխադրամիջոցներ:

Մյուս կողմից, երկրի կանխիկ դրամաշրջանառության համակարգն ունի իր առավելությունները: Մասնավորապես, կանխիկ դրամաշրջանառության բոլոր փուլերին ՀՀ կենտրոնական բանկի ուղղակի մասնակցությունը հնարավորություն է տալիս վերջինիս՝ որպես ոլորտը կարգավորող մարմնի, ապահովել վերահսկելիություն, անմիջապես կանխիկը սպառող օղակի հետ հետադարձ կապ, ըստ այդմ էլ տալիս է փոփոխություններին արագ արձագանքելու և կարգավորման ավելի ճկուն մեխանիզմների կիրառման հնարավորություններ:

Գործող համակարգի թերություններից մեկն այն է, որ շրջանառություն մտնող կանխիկ դրամը անցնում է կրկնակի վերահաշվարկ: Արդյունքում ավելանում են տնտեսությանը կանխիկով սպասարկման ծախսերը: Բացի այդ, այս գործառնության կրկնությունը հանգեցնում է կողմերից մեկի, այս դեպքում առևտրային բանկերի կողմից վերամշակման գործառնության թերի կատարմանը: Այդ մասին են վկայում նաև առևտրային բանկերի՝ կանխիկի վերամշակման համար անհրաժեշտ տեխնիկական հագեցվածության խիստ ցածր մակարդակը:

Գործող համակարգի երկրորդ թերությունը համակարգի մասնակիցների միջև դերերի ոչ արդյունավետ բաշխումն է: Կանխիկ դրամաշրջանառության կազմակերպման գործընթացին համակարգի մասնագիտացված սուբյեկտները՝ բանկերն ու ինկասացիոն կազմակերպությունները մասնակցում են մասնակիորեն, ոչ լիարժեք, մինչդեռ ՀՀ կենտրոնական բանկը, լիարժեքորեն մասնակցելով կանխիկ դրամաշրջանառության կազմակերպման բոլոր փուլերին, իրականացնում է իր համար ոչ հիմնական հանդիսացող գործառնություններ:

Հայաստանում տնտեսական աճի ապահովմանը միտված դրամաշրջանառության կարգավորման թիրախները հստակեցնելիս կարևոր է հաշվի առնել տնտեսության զարգացման առանձնահատկությունները՝ լավագույնս տեղայնացնելու տարբեր մեթոդների կիրառումը: Այն, իր հերթին, պահանջում է վերլուծել երկրի ՀՆԱ-ի կառուցվածքը և բացահայտել այն ոլորտները, որտեղ առավել մեծ են կանխիկ, չհարկվող եկամուտների ստացման հնարավոր ռիսկերը:

Մեր գնահատմամբ Հայաստանում ֆիզիկական և իրավաբանական անձանց միջև դրամական գործարքների առավելագույն չափի վարչական սահմանափակման ներդրումը օգտակար միջոց է ստվերի դեմ պայքարում, բայց դրա հաջող իրականացման համար անհրաժեշտ է իրականացնել մի շարք նախապատրաստական միջոցառումներ, այդ թվում.

- բանկային ենթակառուցվածքի արդիականացում, ներառյալ՝ վճարային տերմինալների լայնածավալ ներդրումը երկրում, բանկի հետ հաճախորդների հարաբերությունների պարզեցում,

- անկանխիկ վճարման համակարգի գործունեության համար իրավական դաշտը կարգավորող նորմատիվ ակտերի բարելավում,

- բնակչության շրջանում բացատրական աշխատանքների իրականացում՝ բնակչության ֆինանսական գրագիտության բարձրացման համար:

Հասկանալի պատճառներով անկանխիկ գործարքներ կատարելու հիմնական խոչընդոտներն են վճարային քարտերի շուկայի ենթակառուցվածքների ոչ բավարար տարածվածությունը, բանկերի նկատմամբ հասարակական անվստահությունը, ինչպես նաև անհատների կողմից ապրանքների և ծառայությունների համար անկանխիկ վճարումներ կատարելու ժամանակ միջոցների անվտանգության և ապահովվածության զգացողության բացակայությունը: Միջոցառումներ համակարգային առումով կարելի է նույնիսկ ասել, որ անկանխիկ վճարումներին անցման համար գործնականում որևէ անհաղթահարելի խոչընդոտ մեր երկրում չկա:

Աշխատանքում հիմնավորված է նաև, որ տնտեսությունում կանխիկի ծավալների կրճատումը կարևորվում է հետևյալ առումներով. դա մի կողմից կարող է մեծապես նպաստել երկրի ֆինանսական միջոցների կառավարելիության էական բարձրացմանը, ստվերային երևույթների սահմանափակմանը և հարկային եկամուտների ավելացմանը, մյուս կողմից՝ բանկային համակարգի գործունեության բարելավմանը և տնտեսության զարգացմանը: Դրանք կարող են լինել ինչպես ուղղակի կամ միկրոտնտեսական, այնպես էլ անուղղակի կամ մակրոտնտեսական: Եթե ուղղակի մեթոդների օգտագործումը հիմնված է հարցումների, հետազոտությունների, ստուգումների և վերլուծությունների միջոցով ձեռք բերված տեղեկատվության օգտագործման, ապա անուղղակի մեթոդները հիմնված են հարկերի և ֆինանսական մարմինների տվյալների, վիճակագրության համախառն վիճակագրության ամփոփ տվյալների վրա²⁰:

Ստվերային տնտեսության և կանխիկ դրամաշրջանառության համար կիրառելի են նաև դրամավարկային մեթոդները, որոնք հիմնված են կանխիկ շրջանառության տվյալների վերլուծության վրա: Ենթադրվում է, որ ստվերային գործարքների ժամանակ հիմնականում օգտագործվում է կանխիկ գումար, որի պատճառով ստվերային հատվածում թղթադրամի և մանրադրամի պահանջարկը մեծանում է: Հետևաբար, տնտեսության մեջ ավելի շատ դրամական միջոցներ են հարկավոր, ավելի, քան մյուս հավասար պայմաններում, հետևաբար, հենց այդ չափով տնտեսությունը գնահատվում է ստվերային: Այս մեթոդները շատ հարմար են, քանի որ դրանք համեմատաբար էժան են եւ չեն պահանջում հատուկ տվյալների հավաքագրում: Հիշյալ մեթոդների լուրջ թերությունն այն է, որ շատ գործոններ ազդում են դրամական միջոցների վրա, որոնք կարող են ամբողջովին խնդրահարույց լինել:

Կարևոր են նաև տեխնոլոգիական գործակիցների, փորձագիտական գնահատման, կառուցվածքային, փափուկ մոդելավորման, սոցիոլոգիական և խառը մեթոդները՝ ստվերային գործունեության զարգացման ընդհանուր միտումը գնահատելու համար:

Հաշվի առնելով վերը նշված դիտարկումները և առաջարկվող մեթոդների արդյունավետությունը, առավել կարևորվում է հետևյալ հիմնական միջոցառումների իրականացումը.

- Քանի որ շրջանառությունում կանխիկի մի մեծ զանգված գտնվում է բնակչության ձեռքին, ուստի անհրաժեշտ է էապես կատարելագործել աշխատավարձերի, սոցիալական նպաստների, կենսաթոշակների, կրթաթոշակների, կոմունալ

²⁰ Базылева М.Н. (2006). Новая экономика и неформальные трудовые отношения // Проблемы современной экономики, № 1/2 (<http://www.m-economy.ru/art.php?nArtId=937>)

վարձավճարների, ուսման վարձավճարների և այլ տեսակի վճարների՝ բանկային համակարգի միջոցով իրականացվող աշխատանքները: Այս միջոցառումների իրականացման արդյունքում կկրճատվի կանխիկի շրջանառությունը, կնվազի կանխիկ դրամաշրջանառության ապահովման համար կենտրոնական բանկի կողմից կատարվող ծախսերը: Բանկերում կմեծանա տնտեսավարող սուբյեկտների և քաղաքացիների կողմից ներդրվող ավանդների ծավալները, բարենպաստ պայմաններ կստեղծվեն դրամավարկային քաղաքականության իրականացման համար: Բացի այդ, բանկերը հնարավորություն կստանան ներգրավել նոր հաճախորդների, իսկ բնակչության եկամուտները կավելանան բանկային հաշիվներում միջոցները պահելու դիմաց ստացվող տոկոսների հաշվին:

- ՀՀ-ում վճարահաշվարկային համակարգում առկա թերություններից է անկանխիկ վճարային գործիքների ոչ լիարժեք օգտագործումը: Չնայած ՀՀ-ում պլաստիկ քարտերի միջոցով վճարումների զգալի կիրառություն են գտել, սակայն ձեռնտու է դրանց կիրառման մասշտաբների ընդլայնումը, կառուցվածքի բարելավումը, նոր քարտատեսակների ներգրավումը: Հետևաբար ՀՀ-ում անկանխիկ վճարային գործիքների զարգացմանն ուղղված միջոցառումներում ավելի մեծ ուշադրություն դարձնել հատկապես պլաստիկ քարտերին:

- Գործունեություն ծավալող բանկերը պետք է ձգտեն կատարելագործել օգտագործվող տեխնոլոգիաները, ավելի ընդլայնեն պլաստիկ քարտերի սպասարկման ենթակառուցվածքները, ներառյալ ավելի մեծ թվով ԱԳՄ-ներ և ՊՈՍ-տերմինալների տեղակայում բազմաբնույթ, տարածապես բաշխված առևտրի և սպասարկման կետերում: Ասվածն իհարկե ենթադրում է ծախսերի իրականացում, սակայն մյուս կողմից սա թույլ կտա ապահովել փոքրածավալ վճարումների անկանխիկ շրջանառությունը և քարտերով գործարքներ կնքել նույնիսկ հանգստյան օրերին, դրանով իսկ ապահովել ավելի շատ եկամուտ բանկերի համար:

- Նշված բոլոր միջոցառումներին զուգահեռ անհրաժեշտ է իրականացնել բնակչության շրջանում բացատրական աշխատանքներ՝ ֆինանսական գրագիտության բարձրացման նպատակով:

Այսպիսով, նշված միջոցառումները ընդհանուր առմամբ հնարավորություն կտան բարձրացնել բանկային համակարգի, մասնավորապես՝ վճարահաշվարկային համակարգի զարգացման, ֆինանսական, բանկային, վճարահաշվարկային ծառայությունների մատուցման մակարդակը, ինչն էլ իր հերթին ստվերային տնտեսության դեմ պայքարի առավել արդյունավետ միջոցներից է: Առաջարկվում է ստեղծել ազգային վճարային խորհուրդ, որի կազմում կարելի է ընդգրկել ֆինանսական շուկայի տարբեր մասնակիցների՝ զարգացնելու արդյունաբերական ստանդարտներ և խթանելու ֆինանսական և կառավարչական նորարարությունները:

Ատենախոսության վերոնշյալ բաժնում ներկայացվել են նաև դրամաշրջանառության արդյունավետության բարձրացման ինստիտուցիոնալ հեռանկարները ՀՀ-ում, մասնավորապես շեշտադրելով, որ դրամաշրջանառության արդյունավետության բարձրացման ինստիտուցիոնալ հիմքերի բարելավմանն ուղղված ուսումնասիրությունները հավասարապես առնչվում են պետության կարգավորիչ գործառնության իրականացման արդյունք հանդիսացող ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքներին և ՀՀ Կառավարության որոշումներին, ՀՀ ԿԲ նորմատիվային և իրավական այլ ակտերին, ինչպես նաև սպառողների վարքագծով պայմանավորված այն երևույթներին, որոնք կարող են նպաստել կամ խոչընդոտել կանխիկ դրամի շրջանառության ավելացմանը և ստվերային տնտեսության մասշտաբների աճին: Տվյալ դեպքում կանխիկի մեծ ծավալների օգտագործման կանխարգելումն, ինքնին կարող է դիտարկվել որպես ստվերային տնտեսության ծավալները զսպող կարևոր ինստիտուտ:

Այս առնչությամբ աշխատանքում անդրադարձ է կատարված կանխիկ դրամով վճարումների նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված սահմանափակումներին, վերլուծված են դրանց առավելություններն ու թերությունները և կատարված վերլուծությունների հիման վրա ներկայացված են օրենսդրական որոշակի փոփոխությունների առաջարկություններ: Ընդ որում, առաջարկությունները ներկայացված են ֆիզիկական անձանց և տնտեսավարող սուբյեկտների մասերով առանձին-առանձին²¹:

Կարևոր են ինչպես պետության, այնպես էլ քաղաքացիական հասարակության, այլ խոսքով՝ սպառողների համադրված և հետևողական գործողությունները:

Նման կարևոր որակական անցումն ապահովելու համար համապատասխան վճարային ենթակառուցվածքի ներդրումն ու զարգացումը անհրաժեշտ են թե մասնավոր, թե հանրային մակարդակով:

Կարևոր է նաև իրազեկել սպառողներին, թե ինչպես է ստվերային տնտեսության գործունեությունն ազդում տնտեսության ընդհանուր վիճակի, հանրային ծառայությունների, սոցիալական ապահովության մակարդակի բարձրացման վրա և շահադրդել նրանց թույլ չտալ չհայտարարագրվող և չհարկվող, կանխիկ դրամով միջնորդված գործարքներ:

Ատենախոսության վերջում ներկայացվել են աշխատանքի հիմնական եզրակացությունները և առաջարկությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կատարված ուսումնասիրությունները թույլ են տալիս հանգել որոշակի եզրակացությունների, ինչպես նաև ներկայացնել հետևյալ առաջարկությունները.

1. Դրամաշրջանառության միջազգային փորձի վերլուծությամբ պարզ է դառնում, որ յուրաքանչյուր երկրում դրամաշրջանառության համակարգն ու դրա կարգավորումն ունեն որոշակի առանձնահատկություններ: Սակայն, կան ընդհանուր հատկանիշներ, որոնք կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

- դրամաշրջանառության կառուցվածքում կանխիկ դրամն ունի մեծ տեսակարար կշիռ, չնայած էլեկտրոնային փողերի և անկանխիկ վճարումների զարգացմանը,

- փոքր վճարումներ կատարելիս բնակչությունը մեծամասամբ առաջնայնությունը տալիս է կանխիկին,

- իրականացվում է թղթադրամների և մետաղադրամների վերահաշվման (պրոցեսինգ) կենտրոնացում՝ նպատակ ունենալով նվազեցնել գործառնական ծախսերը, միևնույն ժամանակ ներդնելով կանխիկ դրամով գործառնությունների աուստրոսինգի մեխանիզմը,

- բոլոր երկրներում, առանց բացառության, մեծ ուշադրություն է դարձվում թղթադրամների և մետաղադրամները որակի և պաշտպանվածության մակարդակի բարձրացմանը, որոնք հիմնված են դրանց «սպառողական որակի» բարելավման, ինչպես նաև արտադրության արժեքի նվազեցման վրա,

- կենտրոնական և առևտրային բանկերը գտնվում են նոր վճարային գործիքների և հաշվարկման մեթոդների որոնումների մեջ:

2. Արևմտյան երկրների փորձը վկայում է, որ անկանխիկ վճարումների զարգացման և կանխիկ շրջանառության սահմանափակման ուղղությամբ ծրագրեր իրականացնելիս առաջ են գալիս մի շարք հիմնահարցեր: Մասնավորապես.

²¹ Ավելի մանրամասն՝ Քոչարյան Ռ., Սաֆարյան Ա. Կանխիկ դրամաշրջանառության սահմանափակման օրենսդրաիրավական ուղիները ՀՀ-ում:// Այլընտրանք գիտական հանդես: # 2 /ապրիլ - հունիս/ 2019.-էջ 227-233

- արևմտյան բանկային համակարգերը և առկա անկանխիկ վճարումների և հաշվարկային համակարգերը միշտ չէ, որ պատրաստ են նոր միջավայրում ներդրման,

- հասարակությունն ու բնակչությունը միշտ չէ, որ համարժեքորեն ընկալում են առաջիկա փոփոխությունները, այդ առումով անհրաժեշտ է բարձրացնել բնակչության ֆինանսական գրագիտությունը, բացատրական աշխատանքներ տանել,

- վճարումների անկանխիկ ձևերին անցնելու գործընթացում, հաշվի առնելով մասնակիցներից ստացված բազմաթիվ իրավական հարցերը, ուստի անհրաժեշտ է իրավաբանական համակարգի ժամանակին աջակցություն,

- էլեկտրոնային վճարումների իրականացման համար անհրաժեշտ են ջանքերի, ժամանակի, ֆինանսական և մարդկային ռեսուրսների զգալի ծախսեր,

- մանրաձախ առևտրով զբաղվող կազմակերպությունների պարագայում պետք է օրենսդրորեն պարտադրել անկանխիկ վճարումների նոր միջոցների ներդնումը:

3. Դրամական զանգվածի և ՀՆԱ-ի մեջ կա օրգանական կապ՝ դրամական զանգվածի նվազումը բերում է ՀՆԱ-ի անկմանը, իսկ վերջինս էլ կախված է համախառն պահանջարկից, որն էլ իր հերթին կախվածության մեջ է գտնվում դրամական զանգվածից: Ուստի երբ կրճատվում է դրամական զանգվածը, դրա արդյունքում ընկնում է համախառն պահանջարկը, որն էլ բերում է տնտեսական աճի դանդաղեցմանը կամ այլ խոսքով՝ ՀՆԱ-ի անկմանը: Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները փաստում են 2014-2018 թթ. ընթացքում ՀՀ-ում վերջնական սպառմանն ուղղված ծախսերի աճման միտումը՝ 734.3 միլիարդ դրամ կամ 15.6%, ընդ որում վերլուծության առումով խիստ հետաքրքրական է, որ եթե տնային տնտեսությունների սպառումն աճել է 528.5 միլիարդ դրամով կամ 12.9%-ով, ապա պետական հատվածի պարագայում այս ցուցանիշը կազմում 188.4 միլիարդ դրամ կամ 32.3%: Ասվածից հետևում է, որ փողի զանգվածի ավելի քան 60%-անոց աճի պարագայում (իսկ կանխիկի պարագայում 128.6 միլիարդ դրամ կամ 36.9%), վերջնական սպառման ծախսերն արձանագրել են աճ ընդամենը 15.6%-ի չափով, ինչից կարող ենք եզրակացնել, որ կանխիկի առյուծի բաժինը սպասարկում է ստվերային տնտեսությանը, ինչն ավելի քան մտահոգիչ է:

4. Ստվերային տնտեսության կրճատման լավագույն լուծումներից է վարչական մեթոդով կանխիկի սահմանափակումը՝ ոլորտի կանոնակարգվածության մակարդակի բարձրացման առումով: Մեր գնահատմամբ, Հայաստանի համար առավել ընդունելի է Բելառուսի օրինակը, ուր հիշյալ մեթոդով կանոնակարգվածությունը բավականին բարձր է: Իրավաբանական անձինք, դրանց ստորաբաժանումները, անհատ ձեռնարկատերերը, բանկային հաշիվներ բացող գործարքառուները, որոնք ունեն իրենց դրամարկղերում ամենօրյա կամ պարբերական դրամական մուտքեր և սպասարկող բանկից կանխիկ գումար են ստանում, պարտավոր են կանխիկ գումարը հանձնել իրենց սպասարկող բանկ կամ բանկից ստացած կանխիկ գումարն ուղղել համապատասխան գործառնությանը՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում (գյուղատնտեսական կազմակերպությունների համար՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում), ներառյալ կանխիկի ստացման օրը: Այս ճանապարհը կարող է կիրառական լինել նաև ՀՀ-ում:

5. Վարչական լծակներից զատ կանխիկի սահմանափակման տնտեսական մեթոդների առումով ստվերային տնտեսության դեմ պայքարի առավել արդյունավետ միջոցներից են վճարային համակարգերի և անկանխիկ վճարումների ֆինանսական ենթակառուցվածքի զարգացումը, աշխատավարձերի և կենսաթոշակների վճարումը անկանխիկ եղանակով: Այս ճանապարհը ընդունելի է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում, առաջին հերթին Լեհաստանում, և հաշվի առնելով ոլորտների համադրելիության աստիճանը, կարող է կիրառելի լինել նաև ՀՀ-ում:

6. Կանխիկ դրամական զանգվածի կրճատման, ստվերային տնտեսության դեմ պայքարում, ինչպես նաև երկրում դրամաշրջանառության արդյունավետության

բարձրացման համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ հիմքեր ձևավորելու համար, հավասարապես կարևոր են ինչպես պետության, այնպես էլ քաղաքացիական հասարակության, այլ խոսքով՝ սպառողների համադրված և հետևողական գործողությունները: Կարևոր է նկատել, որ անկախության տարիներին առաջացել են նոր ինստիտուտներ, որոնք, սակայն, ամբողջովին կայացած չեն: Դրանք նոր արժեքներ են, որոնք միակողմանի չեն կարող ներդրվել տնտեսության և դրա կառավարման ոլորտում առանց պետության, մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության շարունակական համագործակցության:

7. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսավարող սուբյեկտների կողմից աշխատողի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չձևակերպելու պարագայում վերջիններիս աշխատանքի վարձատրությունն իրականացվում է բացառապես կանխիկ ձևով՝ առաջարկում ենք յուրաքանչյուր չձևակերպված վարձու աշխատողի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատժաչափը խստացնել և դարձնել տնտեսագիտորեն կանոնակարգված և տնտեսապես հիմնավորված՝ տուգանքը սահմանելով միջին ամսական աշխատավարձից հաշվարկվող եկամտային հարկի գումարի նկատմամբ:

8. Փոքր գումարով (մինչև 3 միլիոն ՀՀ դրամ) գործարքների պարագայում կանխիկ օգտագործումը ընդունելի համարելով՝ առաջարկում ենք օրենսդրորեն խստացնել տնտեսավարող սուբյեկտների՝ հսկիչ դրամարկղային մեքենայի բացակայության կամ հարկային մարմնում գրանցված չլինելու համար պատժամիջոցը՝ սահմանելով առաջին անգամ խախտման դեպքում 600 հազար դրամի չափով, իսկ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով՝ 2 միլիոն դրամի չափով, խախտումն արձանագրվելուց հետո մեկ տարվա ընթացքում խախտումը կրկնելու դեպքում՝ 2 միլիոն դրամ, իսկ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով ընդհուպ մինչև քրեական պատասխանատվության կիրառում:

9. Ֆիզիկական անձանց մակարդակով գործարքների կանոնակարգման առումով առաջարկում ենք օրենսդրորեն սահմանել նոր սահմանափակում, տալով դրան քանակական գնահատական (3 միլիոն ՀՀ դրամ): Այս գումարը գերազանցող գործարքներն (ապրանքների՝ այդ թվում շարժական և անշարժ գույքի ձեռքբերում, ծառայությունների մատուցում, աշխատանքների կատարում) առաջարկում ենք տեղափոխել անկանխիկ դաշտ, ինչն էլ իր հերթին որոշակիորեն կկրճատի կանխիկ դրամի շարժը ֆիզիկական անձանց միջև:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլվել են հեղինակի հետևալ հրապարակումներում՝

1. Քոչարյան Ռ. Դրամաշրջանառության կարգավորման միջազգային փորձը:// Երևանի «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարան, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները, Գիտական հոդվածների ժողովածու, 1(24), Երևան, 2017.-էջ 280-285

2. Քոչարյան Ռ. ՀՀ դրամաշրջանառության դիմնամիկ վերլուծությունը տնտեսական աճի ապահովման համատեքստում:// ՀՀ ԳԱԱ, Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու, 2017.-էջ 181-184

3. Քոչարյան Ռ. Անկանխիկ դրամաշրջանառության ժամանակագրական փոփոխությունների վերլուծությունը ՀՀ-ում:// ՀՀ ԳԱԱ, Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու, 2018, Մաս 1.-էջ 272-279

4. Քոչարյան Ռ. Վճարահաշվարկային ծառայությունների զարգացման միտումները ՀՀ-ում՝ որպես ստվերային տնտեսության դեմ պայքարի գործիք:// Այլընտրանք գիտական հանդես: # 2 /ապրիլ - հունիս/ 2019.-էջ 234-240

5. Քոչարյան Ռ. Սաֆարյան Ա., Կանխիկ դրամաշրջանառության սահմանափակման օրենսդրավական ուղիները ՀՀ-ում:// Այլընտրանք գիտական հանդես: # 2 /ապրիլ - հունիս/ 2019.-էջ 227-233

6. Քոչարյան Ռ. Տնտեսական աճը և կանխիկ դրամաշրջանառության սահմանափակման խնդիրները Հայաստանի Հանրապետությունում:// Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի # 4(56), Երևան, 2019.-էջ 16-25

КОЧАРЯН РОБЕРТ СОСОВИЧ

**ВОПРОСЫ РЕГУЛИРОВАНИЯ ДЕНЕЖНОГО ОБРАЩЕНИЯ В ПРОЦЕССЕ ОБЕСПЕЧЕНИЯ
ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

**Диссертация на соискание ученой степени кандидата экономических наук по
специальности "Финансы, бухгалтерский учет" 08.00.03.**

*Защита состоится 17 марта 2020 г., в 14:00 на заседании специализированного совета
002 по экономике ВАК РА, действующего в Национальном Аграрном Университете
Армении.*

Адрес: РА, 0009, Ереван, ул. Теряна 74.

РЕЗЮМЕ

Экономический рост - сложное и многогранное явление, одна из важнейших задач экономической теории и экономической политики в каждой стране. Экономический рост является обобщающей характеристикой экономического развития страны, что обусловлено государственной экономической политикой и законодательством страны, а также многочисленными психологическими и социальными факторами.

В любой экономической системе экономический рост является формой расширенного общественного воспроизводства, а также количественного увеличения и качественного улучшения общественного производства, которое позволяет развивать экономики стран наилучшим образом и удовлетворить потребности общества.

Экономический рост количественно оценивается по конечному результату национальной экономики - реальному ВВП. Измерение или оценка экономического роста осуществляются двумя способами:

- а) реальным ростом ВВП в течение определенного периода времени;
- б) по реальному ВВП на душу населения.

Говоря о росте реального ВВП, в свою очередь, среди других факторов, приоритетным вопросом является борьба с теневой экономикой и выявление теневых доходов и, следовательно, теневых расходов и включение в область государственного учета и государственной статистики.

Одним из факторов, противодействующих теневой экономике, является денежное обращение, нормативное и институциональное регулирование которого является основой для эффективной организации всей экономики и ее негативной составляющей - теневого сектора. Движение денежных средств по своей природе является практически незаметным

процессом, поскольку денежные средства могут передаваться от одного человека к другому без фиксации формулировки и транзакций. Именно это обстоятельство является основным условием теневой экономики.

В период реформ, связанных с переходом к рыночной экономике, именно денежное обращение в Армении приобрело широкую популярность, чему способствовал ряд факторов (исторических, политических и экономических). В результате активного использования наличных денег в торговом бизнесе сформировалась огромная и сложная в управлении денежная масса, которая, в свою очередь, является источником финансирования различных схем теневой экономики и основным платежным инструментом.

Таким образом, проблема улучшения денежного обращения в экономике Республики Армения в части сокращения денежного обращения и развития институтов и механизмов безналичного денежного потока является актуальной и имеет важное научное и практическое значение, что доказывает актуальность и необходимость выбранной темы научного исследования.

Целью диссертации является выявление основных направлений снижения объемов теневой экономики в Армении путем разработки предпосылок, необходимых для оптимизации структуры денежного обращения. Последнее имеет как теоретическое, научное, так и практическое значение.

Для этой цели были поставлены следующие основные исследовательские задачи:

- изучить основные экспертные взгляды и подходы к современному денежному обращению;
- изучить роль денежного обращения в регулировании реального сектора экономики;
- проанализировать правовые основы регулирования денежного обращения;
- определить условия развития факторов движения денежных средств и реакции на теневые процессы в движении денежных средств;
- внедрить практические способы сокращения денежного потока и повышения эффективности борьбы с теневой экономикой путем совершенствования системы безналичного обращения.

Основные научные результаты и новизна исследования заключаются в следующем:

- ✓ На макроуровне изучение различных направлений денежно-кредитной политики, реализуемых в Республике Армения, выявило преимущества денежного обращения и основные препятствия для повышения его эффективности;
- ✓ На микроуровне экономически обоснована необходимость улучшения регулирования кассовых операций хозяйствующими субъектами, разработана новая структура государственного контроля;
- ✓ На микроуровне рассмотрены примеры оплаты труда наличными незарегистрированным работникам субъектами предпринимательской деятельности и в порядке, установленном законодательством РА было предложено ужесточить наказание для каждого незарегистрированного работника, взимая регулируемый и экономически скорректированный штраф устанавливая размер от суммы расчета подоходного налога от ежемесячной заработной платы,
- ✓ На микроуровне, учитывая приемлемое использование наличных денег в сделках небольшой суммы (до 3 млн. драмов), обосновано и предложено законодательно ввести ужесточение штрафа за отсутствие кассовых аппаратов или нерегистрацию в налоговом органе государственной власти, наложив штраф в размере 600 000 в первый раз и 2 млн. драмов в сфере общественного питания, а за повторение нарушения в течении года - 2 млн. драмов и вплоть до привлечения к уголовной ответственности за подобную деятельность в сфере общественного питания.

✓ На уровне физических лиц, в отношении операций с наличными между ними экономически обосновано и предложено новое юридическое ограничение, а именно: переводить безналичные операции на сумму свыше 3 млн. драмов (покупка товаров, включая движимое и недвижимое имущество, оказание услуг, работ). Это, в свою очередь, уменьшит денежный поток между людьми.

Основные результаты исследования могут быть использованы в процессе развития и совершенствования системы денежного обращения Республики Армения.

Диссертация была обсуждена и утверждена на совместном заседании кафедры финансов и бухгалтерского учета, аграрной экономики и управления агробизнесом Национального аграрного университета Армении, и основные результаты отражены в 6 научных публикациях, опубликованных автором.

KOCHARYAN ROBERT SOS

ISSUES OF REGULATION OF MONEY CIRCULATION IN THE PROCESS OF MAINTAINING ECONOMIC GROWTH IN THE REPUBLIC OF ARMENIA

Dissertation on the degree of candidate of economic sciences in the specialty "Finance,
Accounting" - 08.00.03

*The defense will take place on 17 March, 2020 at 14:00 at 002 Council of Economics of SCC of
RA at Armenian National Agrarian University.*

Address: 74, Teryan str., Yerevan 0009, RA

ABSTRACT

Economic growth is a complex and multifaceted phenomenon, one of the most important targets of economic theory and economic policy in every country. Economic growth is a summary characteristic of the country's economic development, which is conditioned by the country's state economic policy and legislation, as well as numerous psychological and social factors.

In any economic system, economic growth is a form of enhanced reproduction of public output, and a quantitative increase and qualitative improvement of public output that enables the expansion of the country's economy to best meet the needs of society.

Economic growth is quantitatively estimated by the final result of the national economy - real GDP. Measuring or estimating economic growth is done in two ways:

- a) by the real growth of GDP within a certain period of time;
- b) by the real GDP per capita.

Speaking of real GDP growth in its turn, among other factors, the priority issue is the fight against shadow economy and the identification of shadow income and hence shadow costs and the inclusion in the field of state accounting and public statistics.

One of the factors that counteract the shadow economy is the monetary circulation, whose normative and institutional regulation is the basis for the efficient organization of the entire economy and its negative component - the shadow sector.

The movement of cash by its very nature is a virtually invisible process, as cash can be transferred from one person to another without the formulation and transactions being fixed. It is this circumstance that is the main condition of the shadow economy.

During the period of reforms related to the transition to a market economy, it was precisely cash circulation in Armenia that gained widespread popularity, which was supported by a number of factors (historical, political and economic). As a result of the active use of cash

within the trading business, a huge and hard-to-manage money supply has formed, which in turn is the source of funding for various shadow economy schemes and the main payment tool.

Thus, the issue of improving the circulation of money in the economy of the Republic of Armenia with regard to the reduction of cash circulation and the development of institutes and mechanisms for cashless cash flow is urgent and has an important scientific and practical significance, which proves the urgency and necessity of chosen topic for scientific research.

The purpose of the dissertation is to reveal the guidelines for the reduction of shadow economy in Armenia due to the formation of preconditions for optimizing the money circulation structure. The latter has theoretical, scientific and practical significance.

The following main research objectives have been set for this purpose:

- study the main expert views and approaches to modern money circulation;
- examine the role of money circulation in regulating the real sector of the economy;
- analyze the legal framework for regulating the circulation of money
- define the conditions for the development of cash flow factors and the response to shadow processes in cash flow;
- introduce the practical ways of reducing cash flow and increasing the efficiency of the fight against shadow economy by improving the cashless circulation system.

The main scientific results and novelty of the research are the following:

- ✓ the study of different directions of monetary policy implemented in the Republic of Armenia revealed the advantages of money circulation and the key obstacles to increasing its effectiveness;
- ✓ the need to improve the regulation of cash operations by economic entities has been economically justified, a new state control structure has been introduced;
- ✓ cases of cash paid by unregistered employees were reviewed by business entities in the manner prescribed by the RA legislation, and it was proposed to tighten the penalty for each unregistered employee by making the economically regulated and economically adjusted monthly payroll fine towards;
- ✓ considering acceptable the use of cash in transactions of up to AMD 3 million, it was justified and proposed to legislate to tighten the penalty for the absence of cash registers or non-registration with the tax authority;
- ✓ with regard to cash transactions between individuals, a new legal restriction has been economically justified and proposed.

The main results of the research can be used in the process of development and improvement of monetary circulation system of the Republic of Armenia. In particular, they may be applied by the RA Ministry of Finance, the Central Bank of the Republic of Armenia, the RA State Revenue Committee, as well as the Standing Committees on Financial, Budgetary and Economic Affairs of the National Assembly.

The dissertation was discussed and approved at the joint session of the Chair of Finance and Accounting, Agrarian Economics and Agribusiness Management of the Armenian National Agrarian University, and the main results are reflected in 6 scientific publications published by the author.

